



41. ԹԱՔԱՎՈՐ ԳՈՂԱՑՈՂ ՏՂԱՆ

Մեկ օր քեռին ու եգանը գալիս են իրար մոտ, իրար հետ խոսք ու մին են անում, եգանը ասում ա,— Քեռի՛, արի էթանք գողութուն անելու։

Քեռին ասում ա,— էթանք։

էթում են հարևանի ծիրանը գողանալու։ Քեռին լի՛լում ա ծառը, իսկ եգանը քեռու շավարը հաքիցը ընենց ա հանում, որ քեռին չի իմանում։ Վեր ա գալի ծառից տենում ա, որ շավարը չկա հաքին։

էտ տղան էնքան գողութուն ա անում, որ ուրիշ թաքավորները էտ թաքավորին ամոթանք են տալի, թե.— Քու քաղաքըմը էտ տեսակ գող կա, դու չես կարում բռնես, ամո՛թ քեզի համար։

Թաքավորի ճարը կտրվում ա։ Իրա էրկիրը հայտարարում ա.— «էտ գողը որ գա ինձ մոտ, իմ ախշիկը կտամ նրան»։

էս գողի անունը Զիկո ա էլե։

Զիկոն գնում ա թաքավորի մոտ, ասում ա.— Թաքավորը ասլրած կենա, էրկրիդ գողը ես եմ։

Ասում ա.— Լա՛վ։

Ախշիկը տալիս ա Զիկոյին։ Զիկոն առնում ա, քեֆ ա անում։

Թաքավորը մի օր ասում ա.— Զիկո՛, որ իմ ախշիկը առար, դու պըտի էթաս ախիսն թաքավորից մի բան գողանաս։

Զիկոն ասում ա.— Ուզը՞մ ես էն թաքավորին գողանամ։

Ասում ա.— Շատ ուրախ եմ։

Զիկոն մի օր մի հատ ղուտիկ ա շինում, մի հատ էծի մորթի

ա վերցնում, ամեն մազից մի բոժոժ ա կախ տալի, դնում ա դուռ-
կի մեջ, կապում ա դավի վրա, ինքն էլ նստում ա դավի վրա, էթում
ա դո՛ւզ էն թաքավորի քաղաքը, որը ամոթանք էր տալում:

Գիշերվա մի ժամանակ իշնում ա թաքավորի պալատի կուշտը,
լի՛րմ ա վիրև, հաքնում ա էծի փոստը, դո՛ւզ թաքավորի գլխավիրև
կայնում, իրեն թափ ա տալի՝ բոժոժները ղնզզնզում են ու թաքավո-
րը քնած տեղից զարթնում ա, խեչ ա հանում էրեսը. «Իսուա ու Քրիս-
տոս»,— ասում:

Ջիկոն ասում ա.— Ի՞նչ իսուա Քրիստոս, ինչ բան, Գափրեյ
հրեշտրակը ինձ ղրկել ա, որ քո հոքին առնեմ:

Ասում ա.— Որ Գափրեյ հրեշտրակը քեզ ղրկել ա հոքիս առնելու,
ինձ մեկ օր ժամանակ տուր, իմ քեղիսը իմ ձեռովը անեմ, նո՛ր
տարևը:

Ջիկոն մեկ օր ժամանակ ա տալիս թաքավորին: Թաքավորը իր
պատարազը անում ա, քելեխ ա տալի իրա վազրներին ու ժողովուր-
թին: Էտ մեկ օրը անց ա կենում, մյուս օրը Ջիկոն գալիս ա գիշե-
րը, կայնում ա թաքավորի գլխավիրևը, հենց որ իրան թափ ա տա-
լի, թաքավորը զարթնում ա ու ասում ա.— Իսո՛ւա Քրիստոս, իսո՛ւա
Քրիստոս:

— Դե շո՛ւտ արա,— ասում ա,— ի՞նչ իսուա-Քրիստոսի ժամա-
նակն ա, Գափրեյ հրեշտրակը բարկացել ա, արի մտի ղուտիկը, որ
պլտի տանեմ:

Դնում ա թաքավորին ղուտի մեջ, կապում ա դավի վրա, գալիս
ա դո՛ւզ իրա թաքավորի հողը:

Շանապարհին ասում ա.— Թաքավո՛ր, քեզ որ տանեմ Գափրեյ
հրեշտրակի մոտ, ասեմ. «Կատվի նման մուլավա՛», կմուլավաս,
ասեմ. «Շան նման հաչա՛», կհաչաս, ասեմ. «Էշի պես ղռա՛», կզը-
ռաս:

Թաքավորը կասա.— Լա՛վ:

Հասնում ա իրա թաքավորի պալատը:

Վազրները նստած, տղեն տանում ա ղուտիկը, դնում ա առաջ-
ները: Ասում ա.— Թաքավո՛ր, կատվի նման մուլավա՛ թող Գափրեյ
հրեշտրակը իմանա:

Թաքավորը մուլավում ա.— Միաո՛ւ, միաո՛ւ, միաո՛ւ:

Ասում ա.— Շան նման հաչա՛:

Թաքավորը հաչում ա.— Հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ:

Ասում ա.— էշի նման զուա՛:

Զուում ա.— Իա՛, իա՛, իա՛, ա՛, ա՛, ա՛:

Զիկոն զուտկի դուռը բաց ա անում, Թաքավորը վեր ա կենում,
տենում ա, որ կողքերքին նստած են ուրիշ Թաքավոր և վազրեները:
Սնում ա մուրոված:

Նոր էստեղ Զիկոյի երկրի Թաքավորը ասում ա էտ Թաքավորին.— Տեսա՞ր, ինձ վրա ծիծաղում էիր, տե՛ս, տե՛ս, քեզ ա գողացի
և դու չես հասկացի:

